ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

N << ՀՀՏՄ-ԳՀԽԾՁԲ-25/01>> ԾԱԾԿԱԳՐՈՎ _''**Խմելու ջրագծերի կառուցման և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության**''

ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան << 09 >> ապրիլի 2025թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին.

Միսակ Մելքումյան - Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Անդամներ՝ Աղաբեկ Գալստյան-Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Սիրանուշ Չիբուխչյան- Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Աննա Մանգասարյան-Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

Համաձայն սույն ընթացակարգի Հրավերի պահանջների Մաս 1-ի 2.4.1 կետի և պայմանագրի նախագծով սահմանված <<Խորհրդատուի անձնակազմին ներկայացվող պահանջների>> և) և ելնելով մրցույթի խորհրդատվական բնույթի լինելու հանգամանքից, որը կարգավորվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով (մասնավորապես 44-րդ հոդվածի 2-րդ կետ) մրցույթի հայտերի գնահատումը կատարվել է Հրավերով պահանջվող չափանիշների հանրագումարի մեթոդով.

Հայտերի գնահատման չափանիշներին տրվող միավորները՝

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը
1	2
Մասնագիտական փորձառություն	35
Աշխատանքային ռեսուրսներ	35
Գնային պայման	30
Ընդամենը	100

Հրավերով սահմանված, որ ''Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա: Եթե մասնակցի կողմից ներկայացված ոչ գնային պայմանները բավարարող փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո: ''

Այն ընթացակարգի թիվ 03 արձանագրությամբ մանրամասն արձանագրվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերում անհամապատասխանություններ, որոնք նշյալ արձանագրությամբ մեկ աշխատանքային օրով տրվել են շտկման:

Մասնակիցներից միայն ''Միքնար'' ՍՊԸ-ն է ներկայացրել է շտկում / tavush.gnumner@mta.gov.am էլ. հասցեին ուղարկելու միջոցով/, մասնավորապես ներկայացրել է.

1. Մասնագիտական փորձառության փաստաթղթեր,
2. Աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն,
3. Մասնակիցների կողմից գնային պայմանի միավորի հաշվարկումը գնահատող հանձնաժողովը կատարել է հետևյալ կերպ.

1. Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ֆինանսական առաջարկը գնահատվում է հարյուր միավոր, իսկ մյուս մասնակիցների ֆինանսական առաջարկներին տրվող միավորները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

   ԳՄ= ՆԳ X 100/ԳԳ,

   որտեղ՝

   ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,

   ՆԳ-ն նվազագույն գինն է,

   ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է,

   Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

   ՄԳ = (ԳՄ X 0.7) + (ՏԱ X 0.3),

   որտեղ՝

   ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,

   ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,

   ՏԱ-ն մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորն է.
2. Ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականը (ՄԳ) ամենաբարձրն է.
3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ստորև.

Չափաբաժնի համար	Հ/Հ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին/ՀՀ դրամ	Գնային առաջարկ/AMD/ՀՀ դրամ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1. Կիրանցի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	1	Վոթր պրոջեկտ ՍՊԸ	4385543	3500000/երեք միլիոն հինգ հարյուր հազար/	-	3500000 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/
	2	Միքնար ՍՊԸ		2099000/երկու միլիոն ինը հարյուր իննսունինը հազար	-	2099000/ երկու միլիոն ինը հարյուր իննսունին

						ը հազար
2. Սարիգյուղի խմելու ջրի համակարգի կառուցման աշխատանքներիկատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	1	Վոթր պրոջեկտ ՍՊԸ	2400916	2000000/երկու միլիոն/	-	2000000/երկու միլիոն/
	2	Միքնար ՍՊԸ		1199000/մեկ միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար/	-	1199000/մեկ միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար/
3. Կիրանցի խմելու ջրի համակարգի կառուցման աշխատանքներիկատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	1	Վոթր պրոջեկտ ՍՊԸ	3244848	2500000/երկու միլիոն հինգ հարյուր հազար	-	2500000/երկու միլիոն հինգ հարյուր հազար
	2	Միքնար ՍՊԸ		1599000/մեկ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար	-	1599000/մեկ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար

Սույն ընթացակարգի թիվ 03 արձանագրությամբ մասնակիցների կողմից ներկայացված ոչ գնային պայմանների պահանջների փաստաթղթերում առկա են եղել թերություններ և անհամապատասխանություններ, որոնց շտկման համար տրվել է օրենքով սահմանված մեկ աշխատանքային օր:

Շտկումից հետո մասնակիցների ոչ գնային պայմանների գնահատման արդյունքների վերաբերյալ ստորև.

Մասնագիտական փորձառության 35 միավոր տրվել է Միքնար ՍՊԸ-ին և Վոթր պրոջեկտ ՍՊԸ:
Աշխատանքային ռեսուրսներ 35 միավոր տրվել է միայն Միքնար ՍՊԸ-ին:

ՀՀՏՄ-ԳՀԽԾՁԲ-25/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման արդյունքների ամփոփումից հետո ընդունեց հետևյալ որոշումները.

1. Մրցույթի բոլոր չափաբաժինների մասով ոչ գնային պայմաններին տրված միավորների և գնային պայմանի միավորների հանրագումարով ամենաբարձր միավորն ունի Միքնար ՍՊԸ-ն, ով դառնում է ընտրված մասնակից:
2. Մյուս մասնակից համարվում է չընտրված:
3. Պայմանագիր կնքելու որոշումը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում:

4. Անգործության ժամկետի (10 օրացուցային օր) ավարտից հետո, չորրորդ աշխատանքային օրը մասնակցին ծանուցել պայմանագիր կնքելու վերաբերյալ:
5. Սույն արձանագրության պատճենը տրամադրել բոլոր մասնակիցներին:

Հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Մելքումյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գալստյան

Ս. Չիբուխչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան